ղել է Կիւրիկեան վերջին արքաներից մէկի՝ Աբաս Ա-ի (1113-1145) դուստրը: Նրջիսի հայր Հասանի (այսինքն՝ Գրիգոր Մեծի ա-ներոջ) մասին աղբիւրագիտական այլ նիւ-թի բացակայութեան պատճառով առայժմ հնարաւոր չի թւում անգամ որեւէ ենթադ-րութիւն անել, սակայն բոլոր դէպքերում անհնար է մտածել, թէ նա կարող էր ոչ շատ նշանաւոր մի իշխանական տան ներ-կայացուցիչ լինել:

Հարկ է նկատել, որ առկայ թուականի տառերից երկրորդը մի փոքր տարբերւում է բնագրի միւս Ի-երից: Լրիւ հասկանալի չէ նաեւ նրանից աջ դրուած մէկ կէտը (կրկնակէտ կայ միայն Գ-ից յետոյ): Եթէ ենթադրենք, թէ հեղինակը ցանկացել է Ո եւ Գ թուանշանների միջեւ, ասենք, կցա-գիր «և» գրել, որն Ի-ի է նմանուել, ապա թուականը կը լինէր «Ո եւ Գ», այսինքն՝ 1154 թ., որը չէր հակասի աղբիւրագիտա-կան տուեալների մի խմբի: Սակայն, եթէ կասկածի տակ չենք առնում ընթերցուող թուականի հաւաստիութիւնը, ապա Նրջի-սի արձանագրութեան շնորհիւ պարզ է դառնում, որ անհրաժեշտ է որոշակի վե-րապահումով մօտենալ Գրիգոր Մեծի որդի Վախտանգին յաջորդած Հասան Կրօնաւո-րեալի «աւագութեան» 40 կամ 30 տարի-ների մասին տուեալներին (մանրամասն տե՛ս ստորեւ) եւ նրա՝ Խաչէնի իշխանաց իշխան («տէր») դառնալու իրական թուա-կան համարել 1174-ը:

Ինչ վերաբերում է Գրիգոր Մեծին ու նրա Սմբատ եղբօրը սպանած Հասան Դե-սումեանի տիրոյթներին, ապա հնարաւոր է ենթադրել, որ դրանք ընդգրկել են Խա-չէնագետի Քոլատակ վտակի վերնահով-տում գտնուող Կոշիկ անապատի[49] շրջա-կայքը (դա Կարկառի ձախակողմեան վտակների աւազանների հետ միասին կազմում էր աշխարհացոյցեան Արցախի կենտրոնական Պիանք գաւառի տարածքը[50]), քանի որ վանքի երկու վիմագրե-րում յիշուած է Դեսում անունը: Դրանցից մէկը (մեծ գրանիտէ խաչքարի թեւերի շուրջը 20 կարճ տողերով) թուագրուած է 1179-ով[51], իսկ երկրորդը (սրահի հիւսիսա-

49 Վանքի այս անուանաձեւը դեռեւս ԺԳ դարում արձանագրուած է երիցս. տե՛ս *Դիւան հայ վի-մագրութեան*, պր. V, էջ 28, N 56 («:ՈՂԳ: *[= 1244 թ.]*. յանուն Աստուծոյ, ես՝ Պոռշ, որդի իշխա-նին Վաս{ա}կա, յուսով միաբանեցա *Կոշիկ* ա-նապատոյ. տվի...»), էջ 30, N 61 («Ես՝ Վասակ, գնեցի հող ի Վաճառատեղս, ետու *Կոշիկ* անա-պատ. միաբանքս տվին...»), էջ 32, N 68 («ես՝ Տպէլ *[վերծանուած՝ Տղէլ, որը, սակայն, ուղղելի է ըստ լուսանկար 22-ի եւ գրչանկարի – Ա. Յ.]*, որդի {...}այ, իմ ընչից գնեցի հող, {մի}աբանեցայ Սուրբ Նշանիս կամակցութեամբ եղբարցս *Կոշիկ* ան[ա]յպատոյ. ե{ւ} տվին ինձ...»):

50 Տե՛ս **Ա. Յակոբեան,** *Պատմա-աշխարհագրա-կան եւ վիմագրագիտական հետազօտութիւն-ներ*, էջ 311-316:

51 *Դիւան հայ վիմագրութեան*, պր. V, էջ 25, N 45 («Թի՛ն :ՈԻԸ: *[=1179 թ.]*: Ես՝ Ծահան, որդի]դի[Դեսումա, կանգնեցի զխաչս ի տապանի եղ-բաւր իմո տէ՛ր Գրիգորո»): Մէկ այլ մեծ, գեղա-քանդակ խաչքարի վրայ պահպանուել է նաեւ՝ ըստ ամենայնի, յիշուած Ծահանի 6 տողանոց տապանագիրը. «Թիվ :ՈԾԲ: է *[=1203 թ.]*: Ես՝ Տէ՛ր Գագիկ եւ եղբայր իմ Գրիգ]գ[որ, որդիք Ծահանայ, կանգնեցաք զխաչս հաւր մերո...» (նոյն տեղում, էջ 26, N 49): Ի դէպ, տէր *Գագիկի* անունը յուշում է, որ Դեսումեանների հետ կա-ռելի է կապել եւ կոտրուածքի տեղում աւագ *Դե-սումի* անունը վերականգնել վերջերս Կարկառի Պտրեցիք վտակի հովտում գտնուող Օխտը եղցի հնավայրում յայտնաբերուած մի խաչքա-րի վիմագրում (**Ս. Սարգսեան, Յ. Առաքելեան,** *Պատարա*, Եր., 2006, էջ 10). «Թիւն :ՈԺԲ: էր *[=1163 թ.]*. *Գագիկ՝* որդի *Հասանա*, թոռն {Դե-սումայ՞...}» (յիշենք, որ Արցախում *Գագիկ* ա-նունը քիչ է տարածուած եղել. բացի Պիանքի այս դէպքերից, այն արձանագրուած է մէկ դէպ-քում էլ՝ որպէս Դիզակի յայտնի թագաւորի ա-նուն): Սրա հետ կարող է կապուել եւ նոյն Հա-սանի (որը լիովին կարող է լինել Գրիգոր Մեծ Խօխանաբերդցու թշնամին) տապանագիրը համարուել մօտակայքի միւս խաչքարի վիմա-գիրը (նոյն էջում). «Ի :ՈԺԴ: թվական[ի] *[=1165 թ.]*. կանգնեցա խաչս ի տապանի Հասանա՝ որ-{դոյ՞...} ակ{՞...: Որք} երկրպագէք, յաղաւթս յ{ի-շեցէ՛ք}»: Իհարկէ, չափազանց հրապուրիչ է նաեւ մօտակայ տապանատան մէջ կանգնած խաչքարի 10 տողանոց վիմագիրը (էջ 9. «Թիւ /